



ՎԱՀՐԱՄ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

Տպագրել է բանաստեղծությունների երկու ժողովածու, երկու վեպ, պատմվածքների և վիպակների ժողովածուներ: «Սողանք» վեպը և «Հիմար մարդը» վիպակը առանձին գրքերով ֆրանսերեն լույս են տեսել Փարիզում (2007 թ., 2010 թ.): «Փախուստ ավետյաց երկրից» սցենարը լավագույնն է ճանաչվել «Հայաստան-2020» մրցույթում (2005 թ.): 2011-ին «Օրանժ» ընկերության հայտարարած մրցանակաբաշխությունում լավագույն սցենար է ճանաչվել «Չարենց» սցենարը, որն առանձին գրքով լույս է տեսել 2012-ին:

Թարգմանում է հունգարերենից: Հրատարակել է Յանոշ Պիլինսկու «Արգելված աստղի վրա» (2005 թ.) և Դյորդյ Պետրիի (2010 թ.) «Առանց» բանաստեղծական ժողովածուները:

Կապույտ
ՀԱՅԱՍՏԱՆԻ
ԳՐԱԴԱՐԱՆ

ԱՆՔՆՈՒԹՅՈՒՆԸ ՓԱՐԻՉՈՒՄ

ՏՈՆ. ԱՐԴԵՆ ԹԱՆԳԱՐԱՆՈՒՄ Է

Ոչ մի տեղ մարդ իրեն այնքան մենակ չի զգում, ինչքան՝ Փարիզում, որը տասնիններորդ դարի մայրաքաղաքն էր, ըստ Վալտեր Բենյամինի: Իսկ քսաներորդ դարում տոն էր, որ միշտ... Հեմինգուեյի հետ էր: Եվ նա հույս է տալիս, որ Փարիզը քեզ հետ էլ կլինի, որ դեռ կհասցնես մտնել մեծ նկարիչների արվեստանոցներ, տեսնել սյուռեալիստներին ու էքզիստենցիալիստներին: Բայց... ուր է գնաս, քեզ կասեն, որ նրանք այստեղ էին երեկ չէ առաջին օրը-երեկ... այսօր թանգարաններում են: Տոն, որը թանգարանում է...

ՄԻՋԱՐԿՈՒԹՅՈՒՆ – ՓԱՐԻՉ ԸՆԿՆԵԼՈՒ ԲԱՐԴՈՒԹՅՈՒՆԸ

Կայարամ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՆՔՆՈՒԹՅՈՒՆ

«Եվրոպայի հայելիները» սլովակյան ծրագրին մասնակցելու առաջարկը ես ստացա 2011 թ. ապրիլի 29-ին, Մոսկվայում, որտեղ սցենար էի գրում ռուսական հեռուստաալիքների համար: Եվրոպական քսան վիպասանների (prominent novelists) թվում հրավիրվում էի երեք շաբաթով այցելել մի ուրիշ եվրոպական երկիր և էստե գրել տպավորություններիս մասին, որը մյուս տասնինի հետ կտպագրվի անգլերեն ու ֆրանսերեն ժողովածուներում: Իմ երկիրը Ֆրանսիան էր, քանի որ երկու գիրք ունեմ այնտեղ տպված: Ընդունեցի հրավերը, գրեցի՝ երբ կնախընտրեի գնալ, և արդեն երկու օր անց սիրալիր կազմակերպիչները ինձ հուլիսի 5-ի Երևան-Փարիզ ինքնաթիռի տոմս ուղարկեցին: Մեկ-երկու օր հապաղելուց հետո ես հիշեցրի երջանիկ սլովակներին, որ հայերս դեռ կարիք ունենք վիզայի: «Ինչպիսի՞ հրավեր է ձեզ պետք»,– հարցրեց ինձ Բրատիսլավայից Նախագծի ղեկավար տիկին Մարթա Սիմեչկովան: «Խորհրդակցեք ձեր արտգործնախարարության հետ»,– առաջարկեցի ես:

Մեկ շաբաթ սպասեցի, մինչև ստացվեց հրավերը, հավաքեցի անհրաժեշտ փաստաթղթերը և ուրախ-ուրախ, որ, ի տարբերություն Երևանի, Մոսկվայում սլովակյան հյուպատոսարան կա, գնացի այնտեղ: Ինձ բաժին ընկավ ակնուցավոր, խիստ տեսքով աշխատակցի պատուհանիկը: Նրա դեմքին թեթև գոհունակություն կար՝ թղթերս նայելիս. մտածեցի, որ ամեն ինչ կարգին է: Բայց հանկարծ այլայլվեց՝ տեսավ, որ ուզում եմ Ֆրանսիա մեկնել: Բացատրեցի, որ ծրագրի իմաստը հենց դա է՝ «Եվրոպայի հայելիները» գրողներին հրավիրում է ոչ թե Սլովակիա, այլ՝ ուրիշ երկիր: Տղամարդը գնաց հյուպատոսի մոտ, վերադարձավ մերժմամբ՝ Ձեր դիմումը չենք ընդունում, պարոն: Ես ասի, սլովակյան արտգործնախարարությունը տեղյակ է՝ չօգնեց:

Գրեցի տիկին Սիմեչկովային, որ ինձ հրավեր է պետք Ֆրանսիայից՝ այլապես գործը զլուխ չի գա: Նա մեկ շաբաթում գործընկեր գտավ Փարիզում, ևս մի քանի օր անց ստացվեց հրավերը: Ֆրանսիական վիզայի համար պահանջվող նույնիսկ լուսանկարի ֆոնն ու դեմքի չափերը տարբեր էին սլովակյանից, փաստաթղթերի ցուցակն էլ նույնը չէր, չնայած երկուսն էլ Շենգեն-վիզա են տալիս:

Տարբերությունները վերացրի, գևացի «Վիզայի կենտրոն»: Սա առևտրային կազմակերպություն է, որ օրական հազար այցելու է սպասարկում: Պարզվեց, որ տեղացիներին հիևգ, իսկ արտասահմանցիներին առևժազն տասն օր է պետք, որ Մոսկվայում վիզա ստանան: Իմանալով, որ ես prominent եվրոպական գրող եմ, և վիզայիս պատմությունը երկար չի տևելու, ես արդեն Մոսկվա-Երևան տոմս էի գնել, որ մինչև Ֆրանսիա մեկնելու հարազատներիս այցելեմ, և մինչև թռիչքն արդեն մնացել էր... ինը օր: Հայաստանում արագ կստանամ վիզան, մտածեցի՝ մինչև հուլիսի 5-ը դեռ երեք շաբաթ կար: Մտա ինտերնետ, որպեսզի ժամադրություն վերցնեմ: Կայքից իմացա, որ կարող եմ հերթագրվել միայն... օգոստոսի 23-ի համար: Կարծեցի, տեխնիկական սխալ է՝ բայց էջը թարմացնելու փորձերս արդյունք չտվեցին, միակ հեռախոսն էլ, որ նշված էր կայքում, ընդհանրապես զանգեր չէր ընդունում: Զանգեցի Երևան, ընկերներս ինձ բացատրեցին, որ պետք է նամակ գրեմ անձամբ հյուպատոսին, որ բացառություն անի, դուստրս ու որդիս էլ ինձ հյուպատոսի էլեկտրոնային հասցեն ուղարկեցին: Ես մի երկու ժամ չարչարվեցի, որպեսզի տպավորիչ նամակ գրեմ: Ուղարկեցի: Սպասեցի: Մի քանի օր: Լուր չկա: Զանգեցի Երևան: Մեր երկիր փոքր է՝ ընկերներս պարզեցին, որ Ֆրանսիայից նախարար է ժամանել, և դեսպանն ու հյուպատոսը նրանով են զբաղված:

Ես հասկացա, որ կարող է մինչև հուլիսի 5-ը չհասցնեմ վիզան ստանալ, վերադարձրի Երևանի տոմսը, գևացի Վիզայի կենտրոն: Դիմումս չընդունեցին՝ պակասում էր հյուրանոցի ամրագրման փաստաթուղթը: Ամրագրման համար վարկային քարտ էր հարկավոր, որը ես չունեմ, չնայած որ prominent վիպասան եմ: Կամ չունեմ, քանի որ prominent վիպասան եմ: Մի օր էլ կորցրի, մինչև Մոսկվայում գտա զբոսաշրջային գործակալություն՝ հնդիկների, որոնք ինձ համար հյուրանոց ամրագրեցին Փարիզում՝ առանց ուղեգիր վաճառելու, միայն ձմեռը Գոա այցելելու խոստման դիմաց: Գործս բարդանում էր նրանով, որ մի գրական հրավեր էլ Շվեյցարիայից էի ստացել, և այդ վիզան էլ պետք է հասցնեի ստանալ մինչև Շենգեն գոտու երկիր մեկնելը: Հանձնեցի թղթերս, հետևեց ավետիսների կարծ շրջանը... Լուծվեց շվեյցարական վիզայիս հարցը... Դիմելուց երեք օր անց ստացա ֆրանսիական վիզան: Զուգահեռ՝ Հայաստանում Ֆրանսիայի հյուպատոսի նամակը, թե՛ կարող եք դիմել Ձեր ցանկացած օրը... Բայց չհասցրի ուրախանալ, քանի որ սկսվել էին ձանապարհաձախսի փոխանցման դժվարությունները, որոնց մասին չեմ պատմի՝ թեմայից ընդմիջտ չչեղվելու համար... Միայն կասեմ, որ թույլ

Նյարդերի տեր մարդը կիրաժարվեր ծամփորդությունից: Իմ նյարդերը երևի ամուր եմ: Միայն թե վստահ չեմ prominent վիպասանի համար առավելություն, թե՛ թերություն եմ եղբան ամուր նյարդերը:

ԱՌԱՋԻՆ ՄԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ ՓԱՐԻՉ ՏԱՆՈՂ RER-ՈՒՄ

Շարլ դը Գոլ օդանավակայանում երկար հերթ էր RER-ի՝ «մերձքաղաքային մետրոյի», տոմս առնելու համար: Տոմսարկղի չորս պատուհանից երկուսը չէին գործում, չգիտես ինչու: Սա նշում եմ որպես առաջին ու... վերջին անհարմարություն, որ Փարիզն ինձ մատուցեց: ...Երբ գնացք նստեցի ու վերջապես շունչս տեղը բերեցի, որ շուտով կլինեմ Փարիզում, նկատեցի, որ հարևան նստարանին սև ֆլումասթերով վիրավորված խզբզել էին՝ Чечня страна волков: Մի քիչ ուշ հասկացա, որ դա պատասխանն էր պատուհանին մեծ, կռվազան տառերով խզբզած Tchetchnia-ի: Անհավատալի էր, բայց՝ փաստ. ռուս-չեչենական հակամարտությունն այստեղ էլ պետք է արտահայտվեր, վկան էլ ես պետք է դառնայի՝ վերջին մի քանի տարին Մոսկվայում անցկացնելուց հետո:

ՓԱՐԻՉԻ ԳՈՒՅՆԸ

Տարիներ առաջ Փարիզում գրող Մովսես Պչաքձյանի տանը երկու շաբաթ ապրելով՝ տասներկու հաղորդում նկարեցի Նոր մեկնարկած «Ար» հեռուստաընկերության համար՝ որպես հեղինակ, օպերատոր և ռեժիսոր: Մեկը Շառլ Ազնավուրի առաջին հայերեն հարցազրույցը եղավ: Մեկ ուրիշն էլ կոչվում էր՝ «Փարիզը Մովսես Պչաքձյանի պատուհանից»: Անընդհատ նկարում էի պատուհանից, քանի որ Փարիզի շենքերն անընդհատ փոխում են իրենց երանգը, Նույնիսկ՝ գույնը: Ըստ արևի, անձրևի, ամպամածության և դրանց բազում աստիճանների: Այս քաղաքն իսկական «ներկիր ինքը» ալբոմ է բնության համար:

ՓԱՐԻՉՅԱՆ ԱՌԱՋԻՆ ԱՅՅԵԼՈՒԹՅՈՒՆԸ

Վտանգված համարելով ծամփորդությունս՝ ես մի կարգին ծրագիր չէի էլ կազմել Ֆրանսիայի համար: Արդեն Փարիզում մտածեցի, որ Նախ պետք է այցելեմ հայոց վերջին թագավոր Լևոն Վուսիկյանի (1374-75 թթ.) դամբարան: Ճիշտ էր Ֆրանսիայի ծանաչողությունս սկսել Նրանից: Այո, քանի որ հայոց վերջին թագավորը... Ֆրանսիացի էր: Նա բուն Հայաստանից հարյուրավոր կիլոմետրեր հեռու՝ Միջերկրական ծովի ափին հիմնված Կիլիկիայի հայոց պետության (XI-XIV դդ.) գահ բարձրացավ 1374 թ., երբ սպառվել էին հայկական թագավորական տոհմերի ժառանգները: Լևոն Վուսիկյանի երակներում հայի

ԱՆՔՆՈՒԹՅՈՒՆԸ ՓԱՐԻԶՈՒՄ

արյուն չէր հոսում, բայց նրա տոհմի «ֆրանկ» խաչակիր արքաները բազմիցս խնամիացել էին հայ թագավորների հետ, և նրա երակներում, պատկերավոր ասած, հոսում էր ժամանակի կայսրությունների դեմ հայերի ու խաչակիրների համատեղ պայքարի պատմությունը...

Լուսինյանի դամբանաքարը գտնվում է Փարիզի երևելի տաճարներից մեկում՝ Սեն-Դենիում (V դար), որտեղ ամփոփված են Ֆրանսիայի թագավորների աճյունները վաղ միջնադարից սկսած: Գերեզմանաքարերին՝ բնական մեծությամբ պառկած են հանգուցյալների մահարձանները: Ուրեմն, ֆրանսիացիները դեմքով գիտեն իրենց թագավորներին, ոչ թե մեզ նման՝ 19-րդ դարին արված գեղանկարներով:

Մեր Լևոն V-ը թագավորներից վերջինն է՝ ըստ ժամանակի ու տաճարում իր տեղի: Տեսնես հայ զբոսաշրջիկներից քանիսն է այցելում իր վերջին թագավորի դամբանին, մտածեցի ես ու ծնկի իջա... Մեջս՝ վախ, որ թատրոնի նման կլինի, ուզում էի ասել՝ թագավոր, վեց դար անց հայերը նորից անկախ պետություն ունեն: Բայց հիշեցի, որ նրա երբեմնի թագավորության տարածքի հայ բնակչության մեծ մասը կոտորվեց... 1915 թ.: Երբ ջարդարար թուրքերը պարտություն կրեցին, Ֆրանսիան կիլիկեցիների բեկորներին իր հովանու տակ առավ: Խոստացավ ինքնավարություն: Բայց պարտված թուրքերը շահեցին դիվանագիտական առևտուրը, և Կիլիկիան ամբողջովին հայաթափվեց... Ես ինձ դժվարությամբ ստիպեցի վերադառնալ այն մտքին, որ գոյություն ունի Հայաստանի անկախ Հանրապետությունը: Սև անցյալի հսկա բեռով, կայսրություններից ժառանգած հին ու հետխորհրդային նոր հիվանդություններով, հարցական նշանը, իսպաներենի նման՝ էբախտի? երկու կողմից դրված... բայց կա:

Կայսրան
ՀԱՅԱՍՏԱՆ

ՓԱՐԻԶԻ «ԱԶԳՈՒԹՅՈՒՆԸ»

Ֆրանսիացի գրող (դերասան, ռեժիսոր) Ժակ Ռոմանի պատմելով՝ 50-ականների Փարիզում աֆրիկացիներին մատով էին ցույց տալիս: Այսօրվա առաջին տպավորությունը Փարիզից այն է, որ դեռ Ֆրանսիա չես հասել: Մետրոյում ուղևորների շուրջ մեկ երրորդը էթնիկ աֆրիկացիներ ու արաբներ են: Փողոցներում շատ են «խառն» զույգերը, որոնք երջանիկ տեսք ունեն... Զարմանալի է արդյոք դա: Դեռ կես դար առաջ Ֆրանսիան կայսրություն էր: Իսկ երկիրը, որ գաղութներ է նվաճում, իր հերթին բացում է մայրաքաղաքի դռները գաղութների ընտրախավի առաջ: Ավելի ուշ գաղութների ժողովուրդն է ծավալվում դեպի մետրոպոլիան, որի հետ կապված է լեզվով, մշակույթով, տնտեսությամբ... Նույն վիճակն է նաև Ռուսաստանում: Ուղևորությունիցս առաջ ու հետո շատ հայերի եմ հանդիպել, որ ցավ էին հայտնում, որ Փարիզում «ֆրանսիացի» չի մնացել: Մենք միատարր երկիր ենք, դրա համար ենք «ֆրանսիացի» փնտրում Փարիզում: Բայց չե՞ որ մենք էլ Ռուսաստանում ենք

շատ, ու աչքի ենք ընկնում: Իրենք, տարբեր ծագման ֆրանսիացիները կարճ էին կապում. ֆրանսիացին նա է, ում անձը հաստատող փաստաթղթում նշված է՝ Ֆրանսիայի քաղաքացի: Շատերը նաև ինձ հարցնում էին՝ իսկ ֆրանսիացի՞ են արդյոք մենք տարագիրներ Դալին ու Պիկասոն, որ Ֆրանսիայի ազգային հպարտությունն են: Չմոռանամ նշել, որ այս հարցը տվողներն ավելի հաճախ ներգաղթածների ժառանգներ էին:

Ֆրանսիացիները՝ չգիտեմ, բայց իմ կարծիքով ֆրանսուիկները յուրահատուկ են: Անկախ մաշկի գույնից, նրանք թիկնոց կամ վերարկու են հագնում ամռան շոգին՝ նախընտրելով մուգ գույները, դեմքներին ինքնասպանության նախորդ օրվա մեղամաղձություն է, որից ճմլվում է մարդու սիրտը... Եվ միայն լեզվի ոչ բավարար իմացությունն էր խանգարում, որ մոտենայի ու փորձեր փրկել նրանց:

ՓԱՐԻՉԻ ՊԱՐԶՈՒԹՅՈՒՆԸ

Փարիզը փոքր չէ, բայց այստեղ կարող ես մոլորվել, եթե... մշակույթին ու պատմությանը ընդհանրապես ծանոթ չես՝ պողոտաների, ճեմնողիների, այգիների անունները հայտնի են վեպերից, ֆիլմերից, հեղափոխությունների պատմությունից ու փիլիսոփայությունից: Ոչ միայն ֆրանսիական: Բենեդի ավենյու, մետրոյի «Ստալինգրադ» կայարան, Ջեֆերսոնի արձան, Չերչիլի արձան... Ավիևյոնի ամենամյա թատերական փառատոնից ինձ մի ներկայացում հաջողվեց նայել՝ Բաց թատրոնի «Խավարասերը»: Հեղինակ՝ Սեմ Հոլբրոֆթ, բեմադրիչ՝ Ալեքսանդր Պլանկ: Բեմադրության հեղինակային ռեպլիկներն... արտասանվում էին բեմում: Ճիշտ այդպես էլ Փարիզում կարծես հեղինակային մի ձայն ուղեկցում է քեզ թաղամասից թաղամաս, փողոցից փողոց, սրճարանից սրճարան: Պակասը կարող են լրացնել բարեհաճ փարիզեցիները: Անրի լը Գուբենը՝ «Սենտ-Անդրե-դեզ-Արտ» հյուրանոցի տերը, մուշկետի կրակոցի հետք է ցույց տալիս այն պատին, որի տակ նստած նախաձաշում եմ, ապա՝ մի հին դռնակ, որտեղից դավաճանը աշտարակ է ներս թողել անգլիացիներին, որոնց դեմ պայքարն հետագայում առաջնորդեց ժաննա դ'Արկը... Ապա նաև՝ շենքը, որտեղ... ապրել է բժիշկ (բժիշկ) Գիլյոտինը...

Բացառիկ ուղեւորներ:

ՓԱՐԻՉԻ ԹԱՆԳԱՐԱՆՆԵՐԸ

Ես շատ չեմ սիրում թանգարաններ, որովհետև դրանցում ժամանակը ավարտված է: Միայն թե... ինչպե՞ս Փարիզում շաբաթներ մնալ ու չգնալ Լուվր, Օրսեի, Մալյոլի, Նամակների և ձեռագրերի, Մարդու Էվոլյուցիայի թանգարաններ, Փոքր և Մեծ պալատների ցուցասրահներ, Վերսալ... Ճիշտ

Է, Լուվր մտնելով, ես նախ չուղղվեցի դեպի «Մոնա Լիզան»՝ բոլորի պես, որովհետև ուրիշ վատ գիծ էլ ունեմ դեռ ուսանող տարիներից՝ կասկածով եմ վերաբերվում այն բաներին, որոնցով բոլորը հիանում են: Ժամեր անցկացրի մյուս թևում՝ դիտելով Հին Արևելքի ցնցող արվեստն ու թագավորության շրջանի ֆրանսիական մեծաշուք արձանները: Մինչև որ սիրտս սկսեց խառնել գեղագիտական գերհագեցածությունից: Այդ ժամանակ գնացի Իտալական սրահ: Հսկա դահլիճում այնպիսի աղմուկ էր, ինչպես՝ շուկայում: Բոլորը վազում էին մի ուղղությամբ՝ սուրալով պատերին խիտ կախված նկարների կողքով: Ես մոտեցա: Ռաֆայել: Բոտիչելլի: Վերոնեզա: Տիցիան... Դա Վինչի: Ի վերջո, ինքս էլ մոտեցա «Ջոկոնդային»: Նկարի դիմաց հաստ շերտով զբոսաշրջիկներ էին կանգնած, անընդհատ լուսանկարում էին: Ո՞րն էր իմաստը՝ վերատպությունները հասանելի են ամենուր: Ես ինքս սկզբում կարողացա միայն մի մեղավոր հայացք գցել նկարի կողմը՝ ժամադրությունից ուշացած պատանու: Հետո նայեցի ուղիղ, ու զգացի, որ հայացքս գնում-կորչում է նկարի մեջ: Զարմանալի էր, բայց աչքերս լցվեցին, չէի կարողանում կտրվել... Շուրջս նայեցի. կարծում էի՝ բոլորն էլ նույնն են զգում: Այդ պահին արտասվալից հայացքներ չնկատեցի, բայց երևույթը կա, եթե «նկարից-նկարը» իր այսօրվա համբավին է հասել... Մինչդեռ ես ինքս արդեն ստիպված էի կտրվել՝ ուշանում էի իրական հանդիպումից՝ գործերով Փարիզում գտնվող տիկին Սիմաչկովան պետք է ինձ ձանապարհաժախսս փոխանցեր, որի բանկային եղանակով ուղարկելու փորձերը ծախողվել էին: Դուրս եկա Լուվրից: Ձանապարհս անցնում էր Կոնդորսիեի հուշարձանի մոտով: 19-րդ դարի վերջին կանգնեցված դասական ոճի արձանի երկու կողմում վազող սև կերպարանքներ էին, ձեռքներին՝ կարմիր գույնի Ahlala մետաղե բացականչություններ: Հեղինակը ժամանակակից քանդակագործ Դանիել Հուրդեն էր (Daniel Hourdn): Հետագայում նույն հեղինակի մեկ ուրիշ գործ տեսա Սեն-ժերմեն դը Պարի հին եկեղեցու դիմաց: Այս քանդակները պատմական մի հուշարձանից մյուսն են քոչում: ...Փարիզն այդ կերպ չի թողնում, որ դրանք «քնեն», դիմադրում է, որ տոնը թանգարանի վերածվի՝ ձգտելով մնալ... հավերժական ցուցասրահ:

Իսկ մենք Հայաստանն ամեն կերպ ուզում ենք «Բաց-երկնքի տակ-թանգարան» դարձնել: Դրա համար երևի մեր թանգարանները դատարկ են, «բաց-երկնքի տակ-թանգարանն» էլ կամացկամաց դատարկվում է:

ՓԱՐԻԶԻ ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹՅՈՒՆԸ

Թանգարաններում ինձ զարմացրին էրոտիկ տեսարանները՝ միջնադարից սկսած, մերկ ազնվական-բնորոգուհիները: Սա կտրուկ հակադրվում էր հայկական ավանդապահությանը՝ մինչև այսօր, և սեքսի բացակայությանը Սովետական Միությունում, որտեղ միակ հասանելի էրոտիկան մարզուհիների նկարներն էին սև-սպիտակ թերթերում: Այս հակադրության ազդեցությունն էր

երևի երազ-բանաստեղծությունս.

ԱՆԱԿՆԿԱԼ ՀԱՆԴԻՊՈՒՄ ՓԱՐԻՉՈՒՄ

Շատրվանների մեջ մերկ կանգնած է Ե. Դրումովան՝
մեկ ամիս է, չենք հանդիպել՝ Մոսկվայից հետո:
Բարձրահասակ, կատաղած տիկնիկի դեմքով՝
հայացքն առաջ է հառել, արձանների պես,
Նրանց պես անվրդով կրծքերով,
որոնց միայն զգույշ շոյանքը կարող է կենդանացնել:
Հանվում-կանգնում են կողքը,
հայացքս մեխում են առաջ:
Ջուրը հոսում է մեր վրայով,
ինչպես՝ շատրվանային արձանների,
և մեզ չեն նկատում անցորդները՝
ինչպես արձաններին:
Մինչև որ չի հայտնվում Երևանի բարոյախոս զարմուհիս
ու կշտամբում մեզ՝
վերջ տվե՞ք խայտառակությանը:
Չենք պատասխանում Նրան, արձանների պես,
բայց մարդու նման թարս-թարս նայելով
դուրս ենք գալիս շատրվանների տակից,
քանի որ մի լավ սառել-սատկել էինք:

Մինչև այս բանաստեղծությունը ես Փարիզի մասին միայն մի տող էի գրել
«Համեմատություններ կյանքի և մահվան մասին» պոեմում՝

Մահը նման է Փարիզի

Պոեմում կրկնվող այս տողը որևէ կերպ չէր բացատրվում, ինչպես և՛ որևէ
այլ համեմատություն: Բայց հեղինակը գիտեր՝ համեմատությունն արձագանք
էր այն բանի, որ տարիներ առաջ Փարիզում էր, երբ Նրան հասավ ավագ
եղբոր մահվան լուրը... Սիրային «Անակնկալ հանդիպումը» ուղղեց մահվան
«անարդարությունը»:

ՓԱՐԻՉՅԱՆ ՀՅՈՒՐԸՆԿԱԼՈՒԹՅՈՒՆԸ – 1

Իմանալով, որ Փարիզում են, երկրորդ ֆրանսերեն գրքիս հրատարակիչ-
ները՝ Քրիստիան և Ալեն Թոյլեր ամուսինները, որոնց հետ անձամբ հանդիպելու
պատիվը դեռ չէի ունեցել, հրավիրեցին ինձ իրենց ամառանոց՝ Բրիար
գյուղ, Ֆոնտենեյրլոյից ոչ շատ հեռու: Ճանապարհին տեսաք գոթական
ճարտարապետության հրաշքներից մեկը՝ Սենտ Մաթյուրեն եկեղեցին, որը

կառուցվել է երեք դարից ավելի (XII դարավերջից մինչև XVI-ի սկիզբ): Աշտարակի բարձրությունը... 50 մետր: Սարերում կորած մեր եկեղեցիները նրա, ուրիշ եվրոպական տաճարների համեմատ մեղալյոնի են նման: Սենտ Մաթյուրենն ավերվել է կրոնա-հարստութենական երկպառակությունների ընթացքում, կոմս Մոնտգոմերիի կողմից (1568 թ.), շուրջ մեկ դար է, ինչ վերականգնման ընթացքի մեջ է: Այստեղից հեռու չէ ժերմինյի դե Պրեի Սուրբ Փրկիչ եկեղեցին, IX դ. սկիզբ, որի նախատիպը համարվում է Սուրբ Էջմիածնի Մայր տաճարը: Բուն Բրիար գյուղի եկեղեցու ճակատին ժամացույց կա: Ինձ՝ հայիս համար, խորթ է եկեղեցու այսպիսի կիրառությունը՝ այն հավերժի ժամանակը պետք է ցույց տա: Բայց եվրոպայում եկեղեցական ժամացույցների մրցությունը քաղաքապետարանային ժամացույցների հետ սովորական է:

Ինձ հաշիվ եմ տալիս, որ տաճարի իմ պատկերացումից տարբեր է նաև Նոտր Դամն՝ իր զույգ աշտարակներով: Փարիզի Աստվածամոր տաճարը կարծես երկվություն է ազդարարում, մինչդեռ հայկական եկեղեցիները կենտրոնազմբեթ են: Այդ երկվությունը, թե՛ նպատակամետությունն է ճշմարտությանն հասնելու ուղին՝ Աստված գիտի»:

Բրիարում մենք ծաշակում ենք Ալենի եփած ուտելիքները: Այդ պահին էլ ստանում եմ Թոյլերների փարիզյան տանը ընթերցելու հրավերը: Ահա այսպիսի, կովկասյան հետևողական հյուրասիրություն:

Թե՛ Բրիարում, թե՛ Փարիզում ծաշերին ներկա են Թոյլերների զավակներ-թոռները, Ֆրանսիայի Գրքի ազգային կենտրոնի ղեկավարներից Մարտինա Գրելը, հրատարակչության աշխատակիցներ, - հրատարակչությունը տան մի մասն է զբաղեցնում (տունն էլ պատկից է Մուլեն Ռուժին):

Ֆրանսիացիները խոսում են առանց իրար հերթ տալու՝ Հայաստանի մասին, Ֆրանսիայի, ծաշելիս ու հետո՝ անպայման ծաշերի, գիտու: Ի տարբերություն Ռուսաստանի, մասամբ էլ Հայաստանի, որտեղ պատմում են, թե ով ինչքան է խմել նախորդ օրը օղի: Դրսում անձրև է, կանայք ժամանակ առ ժամանակ սիգարետ են վառում՝ դռան հովարի տակ պատսպարվելով ծխում. մաքուր ֆրանսիական կինո: Վերջում էլ ինձ բոլորով ծանապարհ են դնում մինչև մետրո: Կանայք-աղջիկները երկու անգամ համբուրում են այտերս, ինչը հանդիպելիս արդեն արել էին... Բայց ճշտեմ՝ սիրուն աչքերիս համար չէ՝ սովորույթ է... շատ ավելի գեղեցիկ, քան որ հայ տղաներն են իրար ամեն օր փողոցում տեսնելիս պաչաչում:

Արդեն մետրոյում հիշում եմ Ռոն-Ալպերի երկրամասի Դի քաղաքի Գրքի սալոնի կազմակերպիչների հյուրընկալությունը: Նրանք նրբանկատորեն ինձ տեղավորել էին Ռավել գյուղակում, որի ճանապարհն անցնում էր սողանքի միջով. ակնարկ՝ իմ «Սողանք» վեպին: Մտածում եմ, որ գոնե մի գիրք էլ պետք է գրել երիտասարդ գեղեցկուհիների, պարերի ու զվարճությունների մասին:

ՓԱՐԻԶՅԱՆ ՀՅՈՒՐԵՆԿԱԼՈՒԹՅՈՒՆԸ – 2

Թոյլերների ընտանեկան ընթրիքին Մարտինա Գրելը ինձ հայտնեց, որ հրավիրված եմ հոկտեմբերին կայանալիք «Հայաստան – Հայաստաններ» փառատոնին, որը նվիրված է մեր երկրի անկախության 20-ամյակին: Գրքի ազգային կենտրոնի անձնակազմի ստեղծագործ երևակայությունը ծնունդ էր տվել մի հրապուրիչ ծրագրի: Ամբողջ աշխարհից հրավիրված քսան հայ գրողների համար նրանք մտածել էին ճամփորդություն «Արևելյան ձեպընթացով»՝ Մարսելից Փարիզ: Չարագուշակ է առաջին ազդեցությունը «Արևելյան ձեպընթաց» անունից, – գրականության դերի վառ օրինակ՝ Ազաթա Քրիստիի վեպը բոլորը գիտեն, և լսողի առաջին միտքն այն է, որ հայ գրողները Ֆրանսիայից տուն են դառնալու մեկ կամ մի քանի հոգով պակաս: Բայց իրենք՝ ֆրանսիացիները քաջ գիտեին, որ Արևելյան ձեպընթացն արդեն միայն շքագնացք է՝ չի երթնելու չվացուցակով, ծառայում է հանդիսություններին և բարձրակարգ զբոսաշրջային ուղևորություններին... Ննջավագուներ չունի: Թեև... Արևելյան ձեպընթացի հետ կապված անակնկալ մեզ սպասում էր: Երբ, անցնելով կառամատույցին մեզ համար փոխված կապույտ գորգի վրայով, առաջին անգամ մտանք հիասքանչ վագոնը, որով Մառլեն Դիտրիխն էր երթնելել, Շառլ դը Գոլը... Ազաթա Քրիստին, տեսանք, որ այնտեղ ընդամենը յոթ-ութ բազկաթոռ կա: Իսկ մնացածները ոտքի վրա՝ են մնալու՝ տարակուսեցինք: Պարզվեց, որ քսան հայ գրողիս ու մեզ ուղեկցող հինգ-վեց հոգուն ֆրանսիական կառավարությունը հատկացրել էր... յոթ վագոն:

Գնացքի երթուղին՝ Մարսել-Վալանս-Ավիյոն-Լիոն-Փարիզ, նույնպես պատահական չէր ընտրված՝ սա Օսմանյան կայսրությունում 1915 թ. հայերի ցեղասպանությունից Ֆրանսիայում փրկություն գտած մեր ազգակիցների անցած ճանապարհն է առաջին հանգրվանից մինչև մայրաքաղաք: Փրկությունից գոյատևում-ներգրավում-լիարժեք ինքնադրսևորում: Ֆրանսահայության ձակատագիրն արտացոլված էր նաև փառատոնի ծրագրում: «Աքսորը և հիշողությունը», «Պատմության վերապրում», «Աքսորը և բառը», «Հիշողությունը և պատմությունը, վկայություն և վեպ», «Հայաստան՝ ինչ ապագա ունի սփյուռքյան ինքնությունը», «Ավերումից վերականգնում», «Սփյուռքի դերը՝ ազգային և միջազգային»՝ կլոր սեղանների թեմաների երկու երրորդից ավելին լիովին կամ մասնակի վերաբերում են ցեղասպանությանը: Ինչպես նաև Հայկական ժառանգության թանգարանը (Վալանս), որը միակն է Եվրոպայում, պարունակում է առաջին ֆրանսահայ գաղթականների տրված կեցության, աշխատանքի թույլտվության վկայականներ և այլն: Ազգային ողբերգության շեշտադրությունն էր գերիշխում նաև մռայլ բեմ, սև-սպիտակ տխրաթախիժ տեսաուղեկցություն ունեցող հայկական համերգում, որը ներկայացվեց Մարսելում և Փարիզում:

Առաջին իսկ ելույթիս մեջ ես նշեցի, որ թուրքերն, այո, «փչացրել»

ԱՆՔՆՈՒԹՅՈՒՆԸ ՓԱՐԻՉՈՒՄ

Են մեր պատմությունը, բայց փառատոնի ծրագիրն անհամամասն է. հայ գրականության ու հայության խնդիրները բազմազան են, ցեղասպանության՝ մահվան թեման, չպետք է գերակշռի կյանքի հանդեպ: Ինչը հատկապես ծանր է հայաստանցի հայերիս համար, որ օրը 24 ժամ ենք հայ, ի տարբերություն սփյուռքահայերի, որ 24ից-24 են հայ, ապրիլի, մնացած ժամանակ ֆրանսիացի են, բուլղարացի, ամերիկացի և այլն: Հայաստանը հիմա մահացու վտանգների առաջ է, և դրանք պետք է այսօր քննարկել, ոչ թե սպասել սարսափելի հետևանքներին, հետո վախ-վուշ անել:

Իմ ելույթը հակաժառուրյունների ալիք առաջացրեց, բայց հետագայում սփյուռքահայ, հատկապես՝ օտարագիր, գրողները, որոնց «թիկունքում» կար ցեղասպանությանը նվիրված վեպ կամ բանաստեղծությունների շարք՝ որպես ինքնությանը վերադառնալու յուրահատուկ սխրանք, թե՛ հրապարակային ձևով, թե՛ ինձ հետ անձնապես զրուցելիս խոստովանեցին, որ իմ խոսքերն իրենց մտքերում նոր խմորումներ են առաջացրել: Մինչդեռ ֆրանսիացիները անդրդվելի մնացին փառատոնի ծրագրի իմ քննադատության հանդեպ: Տպավորությունն այն էր, որ հայերս նրանց պետք ենք խղճալու և, համապատասխանաբար, որոշ վեհանձն օգնություն ցուցաբերելու համար: Ի հաստատումն ասեմ, որ հայ գրողներին որևէ արարողության ժամանակ այդպես էլ չառաջարկվեց որևէ խոսք ասել, կարծես թե ջունգլիների բնիկներ էինք, որոնց բերել էին թաթիկներից բռնած ման ածելու և հետ ուղարկելու: Սա մասամբ է միայն ֆրանսիացիների մեղքը, ավելի մեղավոր ենք մենք, որ տասնամյակներ ու հարյուրամյակներ աշխարհին քարոզել-պարտադրել ենք զոհ-հայության կարծրատիպը:

Կալյան
ՀԱՅԱՍՏԱՆ

ՓԱՐԻՉԻ ՔՈՒՆԸ

Փարիզը չի քնում: Գոնե The Mazet, Le Cameleon բարերի հատվածում, որ պատուհանիս տակ էին Սենտ-Անդրե-դեզ-Արտ փողոցում, Լատինական թաղամասում: Ճիշտ է, երիտասարդ այցելուների խոսակցությունը մեծ մասամբ անգլերեն է: Մի անգամ, խմած, երգեցին Ազնավուրի «Բոհեմը» գիշերվա 3-4-ին, անգլերեն շեշտադրությամբ: Հպարտություն զգացի: Ասեմ, որ ես միևնույն է բոլորից քիչ էի քնում Փարիզում: Պատճառը զբոսաշրջային «ագահությունը» չէր, ոչ էլ՝ չտեսնված շքեղությունը, Փարիզում ուրիշ գործ չունենալ, տպավորություններ հավաքելուց բացի: Պարզապես ես շատ տեղեր էի մեկնել տարբեր մարդկանց ՀԵՏ, իսկ այստեղ էի ԱՌԱՆՑ Ե. Դրոմովայի: Նաև իմ կյանքում այդ պահին անորոշությունների քանակը շատ անգամ գերազանցում էր որոշակիություններին:

ՓԱՐԻԶԻՆԵՐԻ «ԱՆԿԱՐԳՈՒԹՅՈՒՆԸ»

Փարիզցիները սիրալիր են օտարերկրացիների հանդեպ՝ գոնե իմ անձնական փորձը դա է ասում: Բայց «անկարգ» են, երբ խոսքը վերաբերում է ներքին խնդիրներին: Ֆրանսահայ երկու դասախոսների՝ Կլոդ Մուրաֆյանի և իմ «Հիմար մարդը» վիպակի թարգմանչուհի, հայտնի լեզվաբան և նույնպես դասախոս Անահիտ Տոնապետյանի առաջին հարցերն իրար այսպիսին էին՝ ցույցին մասնակցեցի՞ր... իսկ ուրբաթ օրվա ցույցին մասնակցելու՝ ես. ցույցերով, գործադուլներով իրենց կարծիքն արտահայտելը թերևս ֆրանսիական բնավորություն է: Նաև ընդդիմադիր լինելը՝ ինձ անձամբ չի հաջողվել հանդիպել որևէ ֆրանսիացու, որը չդժգոհեր Սարկոզիից... Ինձ թվաց, որ ֆրանսիական բնավորություն են նաև որոշ կարգի մանր «անկարգություններ»: Փարիզի օդանավակայանին կից կայարանում Մարսելի արագընթաց գնացքին սպասելիս կառամատույցում ես ծխախոտ վառեցի: Անմիջապես էլ նկատեցի կարմիր ցուցանակը՝ ծխելու համար 68 եվրո տուգանք (արի իմացիր, թե ոնց են որոշել չափը): Անցա մոտակա սյան հետևն ու, ահն աչքս առած ու ինքս ինձ մեղադրելով, որ ինձ եվրոպացի գրողի պես չեմ պահում, ծխեցի մինչև վերջ: Երբ արդեն իմ վագոնն էի փնտրում, տեսա, որ երեք հսկիչ-ուղեկցորդները կառամատույցի լայնքով իրարից համաչափ հեռու կանգնած բացահայտ ծխում էին: Մի ուրիշ արգելք էլ մեզ կցված ավտոբուսում տեսա՝ «Վարորդի հետ խոսելն արգելվում է»: Չէի հասցրել մտածել, թե ինչքան տեղին կլինի նույն բանը երևանյան երթուղայիններում կիրառել, երբ մեզ ուղեկցող ֆրանսիացին սկսեց խոսել վարորդի հետ՝ ավարտելով գրույցը միայն տեղ հասնելու առթիվ...

Կայարան
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍՈՑԻԱԼԻՍՏԻԿԱՆ ԿՈՄՄՈՒՆԻՍՏԻԿԱՆ
ՊԱՐԹԻԱՆ

ՀՐԱԺԵՏ ՓԱՐԻԶԻՆ

Վերջին օրը որոշեցի նվիրել իմ և ընկերներին սովետահայ տարիների երազանքների իրականացմանը: Առաջին տեղում կալվադոսն էր, որն անընդհատ խմում էին Ռեմարկի հերոսները «Հաղթական կամար» գրքում: (Համակարգչիս օգնությամբ հաշվեցի՝ բառը հիշատակվում է վեպում 90 անգամ): Մի գիտակ այն տարիներին բացատրել էր, որ կալվադոսն ընդամենը խնձորի օղի է: «Պերեստրոյկայի» ժամանակ խանութներում մասնավոր արտադրանքի խնձորի օղի հայտնվեց լիմոնադի անշուք շշերով, որը հաճույքով խմում էինք, բայց նույնքան անսպասելի անհետացավ: Մի շիշ Pere Damien գնեցի ու խմեցի այդ օրվա հանդիպումներին ընթացքում՝ Սորբոնի համալսարանի մաթեմատիկայի թոշակառու դասախոս և գործող պատմաբան, Կիլիկիայի հրաշալի մասնագետ Կլոդ Մուրաֆյանի, «Հիմար մարդը» վիպակիս թարգմանչուհու՝ Անահիտ Տոնապետյանի, հայ գրականության «Սամուելյան» հայտնի գրախանութի շուրջ 90-ամյա տերերի հետ, որոնք քնքշորեն խմիչքը կոչում էին «կալվա»:

Հիշելով, որ սովետահայ բոհեմի սիրած թեմաներից մեկը պոռնկության

հարցն էր՝ ձիշտ է նրա օրինականացումը, թե՛ ոչ. ցուցակիս հաջորդ կետը Պիգալն էր: Այն տարիներին շատերս մտածում էինք, որ եթե պոռնկությունը հնարավոր չէ վերացնել, ուրեմն պետք է օրինականացնել: Այսօր հստակ վերաբերմունք չունեմ այդ հարցում, և անցա Պիգալով՝ առանց փորձելու օրինական պոռնկության առավելությունները: Ճիշտ՝ անօրինականի պես:

Երեկոյան ծրագրումս «Լե Դո Մագո» (Les Deux Magots) սրճարանն էր: Գնացի, նստեցի Սեն-ժերմեն բուլվարին ամենամոտ մի սեղանի: Սովետի ժամանակ օրեր էինք մթնեցնում Երևանի հատուկներտ քնձռոտ սրճարաններում՝ մեզ երևակայելով Վեռնե, Ռեմբո, Բրետտոն, Պրևեր, Սարտր՝ Փարիզում: Եվ ահա սրճարաններից մեկը, որտեղ «առաջացել էին» նրանք: Պատվիրեցի ֆուա-գրա, որը Ֆրանսիայում օրենքով հայտարարված է մշակութային ու խոհարարական արժեք, և շամպայն, որով խորհուրդ է տրվում վայելել այն: Կում-կում շամպայնս խմելով՝ մտաբերում էի, որ հակառակ մեր թերահավատությանը, ինքներս հայտնի գրողներ էինք դառնում Սովետում, որտեղ հարմարվող գրողները պետության, չհարմարվողները ԿԴԵ-ի հոգաժության առարկան լինելու պատիվն ունեին, մեր չհարմարվող ընթերցողներն էլ, բացի տողերից, կարդում էին նաև տողատակերը: Բայց հենց Սովետը փլվեց և ժամանցի ուրիշ միջոցներ հայտնվեցին, իրար ետևից սկսեցին փակվել գրախանութները, մնացածներից էլ միայն համակարգչի ու անգլերենի դասագրքեր էին գնվում: Ինչպես ամեն ինչ՝ Սովետում, ընթերցասիրությունն էլ կեղծ դուրս եկավ... Գրողներն ուրիշ բան չկարողացան հորինել, քան լացով իշխանության հովանին աղերսելը: Մինչդեռ Ֆրանսիայում՝ Փարիզից մինչև Դի չորս հազար հոգանոց քաղաքը, գրականության, գրողների հանդեպ այնպիսի գուրգուրանք կա ընթերցողների միջև, որ ցրտին կարելի էր ձեռքերդ տաքացնել:

...Բայց դառն մտքերի ժամանակը չէր, քանի որ բերել էին իմ ֆուա-գրան՝ հատուկ սնուցված սագի լյարդի պաշտետը տաքացրած խրթխրթան հացով: Պաշտետի քանակն այնքան էր, որ հանգուցյալ ծնողներս քիչ կհամարեին հասուն տղամարդու նույնիսկ նախաձաշի համար: Բայց ես արդեն հասուն տղամարդ չէի, այլ՝ եվրոպական գրող, և սկսեցի ըմբռնել ֆուա-գրայի ամեն պատառը, որը շատ նուրբ համ ուներ, թեև չգիտեմ՝ արդյո՞ք հարյուր անգամ ավելի, քան՝ պաշտետները, որ ես գնում էի խանութից տանը հարյուր անգամ ավելի էժան:

Վերջացնում էի երեկոն «Լե Դո Մագո»-ում, երբ մայթին հայտնվեց առատ գանգուր մազերով ցածրահասակ մի կին, որն սկսեց առանց ձայնի երգել՝ մենք ոչինչ չունենք, բացի՝ սիրուց... Հանկարծ ես անդրադարձա, որ ես էլ ոչինչ չունեի, բացի՝ սիրուց և խապաներենի հարցական նշանից՝ Էբախտիա? Երկու կողմից դրված: Այն օրից ի վեր, երբ որոշեցի, որ, գրելուց բացի, ոչինչ չեմ անելու... Եվ հանկարծ ինձ երջանիկ զգացի: Որովհետև ինչ որ ունեի, ապագայում էր: Չհաշված՝ Փարիզը, որ դեռ իմն էր լինելու մի ամբողջ գիշեր, իսկ հաջորդ ցերեկ՝ մինչև ինքնաթիռս:

Հուլիս-նոյեմբեր, 2011

Փարիզ – դը Լավինյի դղյակ, Շվեյցարիա – Մոսկվա